«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 132828 01 09 2023թ.

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հաստատել ԵՊՀ-Ի Իջևանի մասնաճյուղի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացների կազմակերպման ժամանակացույցը:

Բոլոր ստորաբաժանումներին՝ խստորեն հետևել ժամանակացույցում նշված աշխատանքների կատարմանն առանց լրացուցիչ գրավոր կամ բանավոր հիշեցումների: Ժամանակացույցում նշված ժամկետները չպահպանելը դիտարկել որպես աշխատանքային պարտականությունների չկատարում և «ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի ներքին կարգապահական կանոններով» սահմանված կարգով կիրառել կարգապահական տույժ:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել փոխտնօրեն Մ. Օթարյանի և ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի վրա:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 132829 01 09 2023թ.

ԵՊՀ-Ի ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերի 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի **ուսումնական պարապմունքներն սկսել՝**

ա) առկա ուսուցման համար՝ ս/թ սեպտեմբերի 1-ից և ավարտել դեկտեմբերի 29-ին,

բ) հեռակա ուսուցման համար՝ ս/թ նոյեմբերի 1-30-ը:

2. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի **ստուգարքների ընդունումը կազմակերպել՝**

ա) առկա ուսուցման համար՝ ս/թ դեկտեմբերի 25-29-ը,

բ) հեռակա ուսուցման համար՝ 2024թ. հունվարի 16-23-ը:

3. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի **քննաշրջանն անցկացնել՝**

ա) առկա ուսուցման համար՝ 2024թ. հունվարի 10-30-ը ժամանակահատվածում,

բ) հեռակա ուսուցման համար՝ 2024թ. հունվարի 30-ից մինչև փետրվարի 24-ը ժամանակահատվածում:

4. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի **պարտքերի մարում սահմանել՝**

ա) առկա ուսուցման համար՝

- առաջին լուծարքային շրջան՝ 2024թ. փետրվարի 6-ից փետրվարի 13-ը,
- երկրորդ լուծարքային շրջան՝ 2024թ. փետրվարի 20-ից փետրվարի 27-ը,

բ) հեռակա ուսուցման համար՝

- առաջին լուծարքային շրջան՝ 2024թ. մարտի 5-ից մարտի 12-ը,
- երկրորդ լուծարքային շրջան՝ 2024թ. մարտի 19-ից մարտի 29-ը:

5. Մագիստրատուրայի հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորումը կազմակերպել 2024թ հունվարի 17-ից փետրվարի 9-ը:

6. Մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն երկու շաբաթ առաջ ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել (ԱԿԻԱ բաժնով) 2023-2024 ուսումնական տարվա ավարտական կուրսերի ուսանողների թեզերի ատեստավորման արդյունքները և մագիստրոսական թեզի պաշտպանությանը մասնակցելու թույլտվություն տալու մասին զեկուցագիրը:

7. Ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողներին արգելել մասնակցել ստուգարքներին ու քննություններին (այդ թվում՝ ընթացիկ): Ամսական վճարման պարագայում առաջին ընթացիկ քննություններին թույլատրել մասնակցել երկու ամսվա ուսման վարձը վճարելուց հետո:

8. 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի **ուսումնական պարապմունքներն սկսել՝**

ա) առկա ուսուցման համար՝ 2024թ. փետրվարի 7-ից և ավարտել հունիսի 4-ին,

հեռակա ուսուցման համար՝

բ) 2024թ. մարտի 12-ից և ավարտել ապրիլի 6-ին:

9. Ուսումնական պլաններով նախատեսված բոլոր տեսակի պրակտիկաները սկսելուց 12 աշխատանքային օր առաջ ՊԿՇՀ բաժին ներկայացնել պրակտիկա անցնող ուսանողների

հրամանների նախագծերը, իսկ պրակտիկայի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ՊԿԾՀ բաժին ներկայացնել հաշվետվություն՝ ըստ հաստատված ձևաչափի:

10. Ժամավճարային հիմունքներով կատարված աշխատանքների հաշվարկի տեղեկագրերը (աշխատանքային հանձնման ակտ) ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը:

11. Աշխատողի՝ որևէ պատճառով բացակայելու դեպքում փոխարինող այլ աշխատողի ներգրավելու մասին զեկուցագիրը ԵՊՀ-ի ԻՄ-ի տնօրենին կամ փոխտնօրենին ներկայացնել բացակայող աշխատողի փոխարինման անհրաժեշտություն առաջանալու պահից առավելագույնը եռօրյա ժամկետում:

ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<u>ՍԵՊՏԵՄԲԵՐ</u>

- Մինչև ս/թ սեպտեմբերի 1-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ սահմանված ձևով:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 5-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքի արդյունքները՝ սահմանված ձևով:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 8-ը բակալավրիատի առաջին կիսամյակում դասավանդվող դասընթացների պլանները տեղադրել e-learning.ysu.am ուսուցման կառավարման համակարգի (ՈՒԿՎ) տիրույթում՝ համապատասխան դասընթացի էջում:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 8-ը ՊԿԾՀ բաժին ներկայացնել ամռանն անցկացված ուսումնական և մասնագիտական պրակտիկաների հաշվետվությունները:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 12-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել առկա ուսուցման ուսանողների փոխատեղման արդյունքները:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 12-ը Ռեգիստրար համակարգում մուտքագրել և հաստատել (դասախոսի կողմից) ընթացիկ կիսամյակում դասախոսի կողմից դասավանդվող դասընթացի բաղադրիչների (ընթացիկ քննություն, ինքնուրույն աշխատանք, ընթացիկ ստուգում, մասնակցություն, եզրափակիչ քննություն) առավելագույն միավորները, բացառությամբ «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգով (հաստատված 04.05.2017թ.) սահմանված դասընթացների, որոնց բաղադրիչների առավելագույն միավորների մուտքագրում և հաստատում չի պահանջվում:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 19-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել տեսողական, լսողական և հենաշարժական խանգարումներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող հաշմանդամ ուսանողների ցանկը և այդ ուսանողների դասապատրաստմանն օժանդակելու նպատակով ընտրված դասախոսների կամ ուսանողների անունները:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 20-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 28-ից բարձր անապահովության միավոր ունեցող բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների տվյալները (տեղեկանք սոցիալական ապահովության ծառայությունից և ակադեմիական տեղեկագիր):
- Մինչև ս/թ սեպտեմբերի 20-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել ՄՄՈՒՀ-ի շրջանավարտների առարկայական տարբերությունները հանձնելու ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը:
- Մինչև ս/թ սեպտեմբերի 20-ը կազմակերպել առկա ուսուցման 60 ESTC կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ուսանողների 2023-2024 ուսումնական տարվա կամընտրական առարկաների ընտրությունը գրանցումների էլեկտրոնային համակարգում (Ռեգիստրար):
- Մինչև ս/թ սեպտեմբերի 22-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել առկա ուսուցման առաջին կուրսերի ուսանողների հետ կնքված պայմանագրերը՝ երկու օրինակից՝ դեկանի մակագրությամբ:

- Մինչև ս/թ սեպտեմբերի 22-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների փաստաթղթերը:
- Ս/թ սեպտեմբերի 29-ը կազմակերպել առկա ուսուցման բակալավրիատի՝ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ դիմումների մուտքագրումը e-request.ysu.am համակարգի միջոցով:

<u>ՀՈԿՏԵՄԲԵՐ</u>

- Մինչև ս/թ հոկտեմբերի 3-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ «Supervision-YSU» էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել առկա ուսուցման ընթացիկ քննությունների ժամանակացույցը:
- Մինչև ս/թ հոկտեմբերի 20-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ «Supervision-YSU» էլեկտրոնային կառավարման համակարգում մուտքագրել հեռակա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասատախտակը:

<u>ՆՈՅԵՄԲԵՐ</u>

- Ս/թ նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 7-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման դիմումները՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:
- Ս/թ նոյեմբերի 1-ից մինչև 14-ը կազմակերպել հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի՝ ուսման վարձավճարների մասնակի փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ դիմումների մուտքագրումը e-request.ysu.am համակարգի միջոցով:
- Ս/թ նոյեմբերի 14-ից մինչև նոյեմբերի 20-ը «Supervision-YSU» էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը:
- Մինչև ս/թ նոյեմբերի 14-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ «Supervision-YSU» էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել հեռակա ուսուցման առաջին կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցը:
- Մինչև ս/թ նոյեմբերի 23-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հեռակա ուսուցման առաջին կուրսերի ուսանողների հետ կնքված պայմանագրերը՝ երկու օրինակից՝ դեկանի մակագրությամբ:
- Նոյեմբերի 28-ից մինչև 30-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ սահմանված ձևով:

<u>ԴԵԿՏԵՄԲԵՐ</u>

- Մինչև ս/թ դեկտեմբերի 1-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2023թ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածուների ցուցակը:
- Մինչև ս/թ դեկտեմբերի 1-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ «Supervision-YSU» էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել 2023-2024 ուսումնական տարվա առկա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:
- Մինչև ս/թ դեկտեմբերի 14-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հրամանները:
- Մինչև ս/թ դեկտեմբերի 14-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի նախապաշտպանության և պաշտպանության ժամանակացույցները:
- Մինչև ս/թ դեկտեմբերի 26-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել ֆակուլտետների գիտխորհրդում հաստատված միջմասնագիտական մագիստրոսական թեզերի (առկայության դեպքում) իրականացման վերաբերյալ հաշվետվությունները, ինչպես նաև թեզերի թեմաները, թեզերը կատարող ուսանողների և համապատասխան ղեկավարների անվանական տվյալները:
- Մինչև ս/թ դեկտեմբերի 29-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հեռակա 60 ESTC կրեդիտատարությամբ կրթական ծրագրի երկրորդ կուրսի մագիստրոսական թեզերի ատեստավորում չանցած ուսանողների ցուցակը:

ՀՈՒՆՎԱՐ

- Մինչև՝2024թ. հունվարի 10-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ «Supervision-YSU» էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել հեռակա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:
- Մինչև 2024թ. հունվարի 17-ը ՈՒԳԿՎ ներկայացնել հաշվետվություն՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման վերաբերյալ (կարգի դրույթներին համապատասխան):
- Մինչև 2024թ. հունվարի 19-ը «Supervision-YSU» էլեկտրոնային կառավարման համակարգում մուտքագրել 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առկա ուսուցման դասատախտակը:
- Մինչև 2024թ. հունվարի 31-ը ՈՒԳԿՎ ներկայացնել կարգով նախատեսված տվյալներ առկա ուսուցման ուսանողների շրջանում 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողների առցանց հարցում կազմակերպելու համար:

ՓԵՏՐՎԱՐ

- Մինչև 2024թ. փետրվարի 02-ը ՈՒԳԿՎ ներկայացնել առկա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները և հաշվետվության 34 ձևը:
- Մինչև 2024թ. փետրվարի 28-ը ՈՒԳԿՎ ներկայացնել հեռակա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները և հաշվետվության 34 ձևը:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ